ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիսի 2011թ. № 19- Ն

գ. ԳԵՏԱՐԳԵԼ

ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ի ԹԻՎ 43-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի1-ին մասի 3-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է

Գետարգել համայնքի ավագանու 2010թ դեկտեմբերի 24-ի «Գետարգել համայնքի 2010թ-ի բյուջեի նախագծի քննարկման ու հաստատման մասին» թիվ 43-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

ըստ գործառական դասակարգման ծրագրերի և տնտեսագիտական դասակարգման հոդվածների

1. 01բաժին 01խումբ 01 դաս.-ի ապարատի ծախսեր 5121 տրանսպորտային սարքավորումներ հոդվածը պակասեցնել 3000.0 / երեք միլիոն / դրամով, որից՝ 2000.0 /երկու միլիոն/ դրամ գումարը ուղղել համայնքի բյուջեի 04 բաժին 05 խումբ 01 դաս 01 ծրագիր 5113 շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածին, իսկ 1000.0 /մեկ միլիոն / դրամ գումարը ուղղել 04 բաժին 05 խումբ 01 դաս 02 ծրագիր 5113 ճանապարհի եզրերի պատերի կապիտալ վերանորոգում հոդվածին:

2. 11 բաժին 01խումբ 02դասի ՀՀ համայնքների պահուստային ֆոնդի 4891 պահուստային միջոցներ հոդվածից 100.0 / հարյուր հազար / դրամ գումար տեղափոխել համայնքի բյուջեի 10 բաժին 07 խումբ 01դաս սոց. հատուկ արտոնություններ ծրագրի 4729 սոց. օգնություն շրջանավարտներին հոդված:

3. 06 բաժին 06 խումբ 01 դասի ֆոնդային բյուջեի բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ ծրագրի 5122 վարչական սարքավորումներ հոդվածից 330.0 /երեք հարյուր երեսուն հազար/ դրամ գումարը տեղափոխել 06 բաժին 02 խումբ 01 դասի համայնքային զարգացում ծրագրի 5131 / աճեցվող ակտիվներ/ հոդված:

Փոփոխության ընդհանուր գումարը՝ 3 430 000 / երեք միլիոն չորս հարյուր երեսուն հազար / դրամ:

կողմ		դեմ	ձեռնպահ
1.Գալստյան Արմեն			
2.Թորոսյան Սասուն			
3.Խաչատրյան Գևորգ			
4. Պետրոսյան Արմեն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ